



Ձիու գլուխ. բրոնզ. Կաւմիւր-բլոււ

4. ԼԵՋՈՒՆ ՈՒ ԳԻՐԸ

Ուրարտեբեհն և նրա ազգակից խուրրիեբեհն լեզվով խոսող ժողովուրդները մ. թ. ա. II—I հազարամյակներում լայնորեն տարածված էին Հայկական բարձրավանդակի վրա: Վանա լճից հարավ-արևելք, ներկայիս Ռեանդուզ քաղաքի շրջանում ընկած Մուսասիրի շրջանը, հավանաբար, ուրարտեբեհն լեզվի տարածման հարավային սահմանն էր: Այն անմիջապես հարում էր ասորեստանյան լեզվի տարածման տերիտորիային: Վանա լճի հյուսիսային ափերին գտնվող Զիուկունի երկրի բնակչությունը նույնպես ուրարտական պիտի լիներ: Խուրրի-ուրարտական բնակչության հյուսիսային սահմանը պարզ չէ: Հավանական է, որ այն անցնում էր անդրարաքսյան շրջաններով:

Ուրարտուներեն լեզվի ուսումնասիրության համար հիմնական նյութ են ծառայում ուրարտական արձանագրությունները: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է քաղել ասորեստանյան աղբյուրներից, որտեղ զգալի թվով հատուկ անուններ են վկայված: Որոշակի օգնություն են ցույց տալիս խուրրիներեն լեզվի տվյալները, որի հետ ուրարտուներենը մոտ ազգակցություն ունի: Մեզ հասել են ուրարտական մի քանի հարյուր արձանագրություններ, գրված քարի, մետաղի, ոսկրի, վերջապես կավե սալիկների վրա¹⁶:



Կոշիպեի կավանդներ. Կարմիր-բլուր

Ուրարտական վիմագիր արձանագրությունները ժայռահեղորեն միանման են. մեծ մասամբ պարունակում են հաղորդումներ արշավանքների և հաղթանակների, տեղեկություններ շինարարական աշխատանքների (ամրոցների, պալատների, տաճարների կառուցման, ջրանցքների անցկացման, խաղողի և սևողատու այգիներ գցելու) մասին: Արձանագրությունների մի փոքր մասը պարունակում է կրոնական և պաշտամունքային բովանդակությամբ տեքստեր: Արձանագրությունների այդ միանմանությունը դժվարացնում է լեզվական շատ հարցերի լուծումը, ուստի և միշտ չէ, որ հաջողվում է տեքստը թարգմանել լիակատար վավերականությամբ և հիմնավոր: Ամենից ավելի մեծ դժվարություններ է հարուցում կավե սալիկների տեքստերի մեկնաբանությունը: Դրանք ուրարտական թագավորների նամակներն են փոխարքաներին կամ տնտեսական ղեկավանների վավերագրեր:

¹⁶ Սույն բաժնում օգտագործված են Գ. Ա. Մելիքիշվիլու «Награ-Урагу» գրքի նյութերը:

Ուրարտուն ունեցել է և իր հիեորոգլիֆ գիրը, որը սահմանափակ տարածում ունեւր և դուրս չէր դալիս նեղ տնտեսական ու պաշտամունքային կարիքների սահմաններից:

Կարելի է ենթադրել, որ ուրարտացիները, ինչպես և ասորեստանցիները, քարի և կավի վրա արձանագրելու համար օգտագործվող սեպագրերին զուգահեռ կիրառում էին նաև արամեական գիրը՝ պապիրուսի վրա: Կարմիր-բլուրում գտնվել է մեկ քուլլա՝ կնիքի դրոշմվածքով, որով, դատելով նրա ստորին մասում եղած դրոշմից, կնքված է եղել հենց պապիրուսի փաթեթը, որն այրվել է հրդեհի ժամանակ:

Վիմագիր արձանագրություններից դատելով, ուրարտական սեպագիրը փոխ է առնվել նոր-ասորեստանյան սեպագրից՝ IX դարում: Սակայն մի շարք առանձնահատկություններ, որոնք հատկապես աչքի են ընկնում կավե սալիկների գրության ձևերի մեջ, թույլ են տալիս խոսելու ուրարտական սեպագրի նաև այլ՝ ավելի հին՝ մ. թ. ա. II հազարամյակին վերաբերող խեթա-խուրրիական ակունքների մասին¹⁷:

Ուրարտական թագավորների մեզ հայտնի հնագույն արձանագրությունները՝ Սարգուրիի՝ Լուտիպրիի որդու (մ. թ. ա. IX դարի 30-ական թվականներ), գրված են ասսուրերեն լեզվով: Ուրարտերենով գրված մեզ հայտնի առաջին արձանագրությունները պատկանում են այդ թագավորի հաջորդին՝ Իշպուի-նիին: Այդ ժամանակից սկսած (IX դարի վերջին քառորդ), Ուրարտում արձանագրությունները կազմում էին հիմնականում ուրարտերեն լեզվով. միայն երկու դեպք է հայտնի, երբ արձանագրությունները կազմվել են երկու լեզվով՝ ուրարտերեն և ասսուրերեն (Քելիշինի և Թոփուզավայի երկլեզվյան արձանագրություններ):


Ուրարտական ամենաուշ սեպագիր տեքստերը պատկանում են մ. թ. ա. VI դարի սկզբի թագավոր Ռուսա Դ-ին (Ռուսա, Ռուսայի որդի): Նրանք զրանաձև կնիքների դրոշմեր են՝ կավե աղյուսակի և քուլլայի վրա:

Ուրարտական գրության մեջ սեպաձև նշանները մոտավորապես նույն գծագրությունն ունեն, ինչ որ նոր-ասորեստանյան սեպագրի համապատասխան նշանները, սակայն, ի տարբերություն ասորեստանյան նշանների, որոնք եռանկյունի գրիկ և գծի տեսքով առանցք ունեն, ուրարտական նշանները գրեթե միշտ խիստ ձգված եռանկյունիների տեսք ունեն: Ուրարտական սեպագիրը ունի և այլ յուրօրինակ գծեր:

Գրի հիմնական սկզբունքները այստեղ նույնն են, ինչ որ ասորեստանյան կամ որևէ այլ սեպագրիներ: Կան նշաններ՝ ձայնավորների, երկձայն վանկերի և եռաձայն վանկերի համար, գաղափարագրեր, այսինքն՝ հասկացություններ արտահայտող նշաններ (օրինակ՝ «երկիր», «ջուր», «աստված» և այլն):

Պետք է ընդգծել, որ ուրարտական արձանագրությունները ըմբռնելի են զգալի չափով հենց շնորհիվ այդ գաղափարագրերի, ինչպես և նրանց տարատեսակը կազմող սահմանիչների (դետերմինատիվների), որոնք նույն նշանակությունը ունենալով ասսուրերեն և ուրարտերեն արձանագրություններում, հաճախ հնարավորություն են տալիս հասկանալու ուրարտական տեքստի իմաստը առանց իմանալու այս կամ այն բառի ուրարտերեն հնչման ձևը:

¹⁷ Տե՛ս ՄՊԸ, էջ 18 և հաջ.:



Սեպագիր հրամանագիր հողի բաժանման մասին. Կարմիր-բլուր

Ուրարտացիները, սակայն, փոխ են առել ասորեստանյան սեպագիր նշանների միայն մի մասը և այն էլ ոչ այն բոլոր նշանակություններով, ինչ որ տրվյալ նշանն ունի ասորեստանյան սեպագրի մեջ: Այսպիսով, ուրարտական սեպագիրը անհամեմատ ավելի պարզ է, քան ասորեստանյանը:

Ուրարտական, ինչպես և ամեն մի այլ սեպագիր կարդացվում է ձախից աջ: Սովորաբար ուրարտացիները գրում էին գծագրված տողերում, բառերը ոչնչով չէին բաժանվում միմյանցից, սակայն առանձին բառերի անջատումը

հեշտանում էր նրանով, որ տողադարձ չէր թույլատրվում, խստորեն պահպանվում էր այն կանոնը, ըստ որի բառը պետք է վերջանար այն նույն տողում, որտեղ նա սկսվել էր:

Անհրաժեշտ է հիշել, որ ուրարտական սեպագիր նշանները տառադարձվում են այն նշանակությամբ համաձայն, որ նրանք ունեցել են ասորեստանյան սեպագրում: Միանգամայն հավանական է, որ սեպագրի ասորեստանյան համակարգը, որն օգտագործվել է այլ լեզվի արտահայտման համար, չկարողանար ճշտորեն հաղորդել ուրարտական լեզվի բոլոր հնչյունները: Ուստի մի շարք դեպքերում ի վիճակի չենք որոշելու ուրարտական հնչյունների իսկական արտասանությունը: Ավելի հաստատուն հողի վրա ենք կանգնում ուրարտերենի բառապաշարը, քերականությունը, ձևաբանությունը, շարահյուսությունը և նրա ունեցած լեզվական կապերը ուսումնասիրելիս: Համեմատաբար լավ է ուսումնասիրված ուրարտական քերականության մեջ անունը, նրա հիմքերը, բայը, նրա խոնարհման համակարգը: Որոշակի հաջողություններ են ձեռք բերված դերանունների, թվական անունների, անցողական ու անանցողական մասնիկների և այլնի ուսումնասիրման գործում:

Ուրարտուի արձանագրական հուշարձանների թառապաշարի ուսումնասիրության ժամանակ ի հայտ են գալիս ուրարտական լեզվի հարավ-արևելյան՝ մուսասիրյան խոսվածքի հետքերը, որը տարբերվում է Վանի թագավորության կենտրոնական մասերի խոսվածքից:

Ուրարտերեն լեզվի ազգակցությունը խուրիբերենի հետ և ուրարտա-հայկական լեզվական կապերը: Հատկապես նկատելի է ուրարտերենի և խուրիբերենի մոտ ազգակցության փաստը: Որքան առաջ են գնում այդ լեզուների մասին մեր գիտելիքները, այնքան ավելի վառ կերպով է հանդես գալիս նրանց միջև եղած ազգակցությունը: Արդեն հնարավոր է դարձել գրելու նրանց միասնական, համեմատական քերականությունը¹⁸:

Ուրարտերենն ու խուրիբերենը միմյանց մոտ են կանգնած առաջին հերթին իրենց կառուցվածքով: Ուրարտերենի մեջ այնքան կարևոր դեր խաղացող էրգատիվ կառուցվածքը ոչ միայն բնորոշ է նաև խուրիբերենի համար, այլև գրեթե լրիվ նույնական են այն արտահայտող ածանցները, խիստ մոտ են երկու լեզուների հոլովական վերջավորությունները, երևան են գալիս համանմանություններ դերանունների մեջ և ընդհանուր երևույթներ հնչյունական համակարգում:

Այդ երկու լեզուների միջև եղած նմանությունները առանձնապես շատ են նրանց բառապաշարում: Օրինակ՝ ուրարտ. խուրադի ռուգմիկա — խուրր. խուրադի, ուրարտ. պիծուշե ռուրախություն — խուրր. պիս ռուրախանալ, ուրարտ. պիլի շըրանցք — խուրր. պալլա, ուրարտ. շալի տարի — խուրր. շաուալա, ուրարտ. և խուրր. խաբի ճանապարհ, ուրարտ. աաբշուադի մարդ — խուրր. աաբշու(վ)ադեի, ուրարտ. սիլա ռոտար — խուրր. շալա և այլն¹⁹:

Բացի այդ, ուրարտական աստվածությունների գլխավոր եռյակում երկու աստված իրենց անունով ընդհանուր են: Ինչպես վերը նշվեց, ուրարտական

¹⁸ Տե՛ս *И. М. Дьяконов, Языки древней Передней Азии*, М., 1967, էջ 113—165:

¹⁹ Տե՛ս *УКН*, էջ 91—92:

պանթեոնում տեղական խաչի աստծուց հետո երկրորդ տեղը զբաղեցնում էր Թեյշեբա աստվածը, որն ընդհանուր, խուրրիական գլխավոր աստվածն էր (խուրրիների մոտ՝ Թեշուբ)։ Խուրա աստվածունհին՝ երկրորդը ուրարտական աստվածունհինների մեջ, համապատասխանում է խուրրիական Խեբա աստվածունհին աստված Շիվինին։ Նույնպես համանմանություն ունի խուրրիական աբեի աստված Շիմիգեի հետ։ Ուրարտացիների և խուրրիների աստվածների ընդհանուր անունների առկայությունը վկայում է այդ երկու էթնիկական խմբերի ոչ միայն լեզվական, այլև մշակութային, իսկ վերջին հաշվով՝ նրանց կուլտուր-էթնիկական նկարագրի մոտիկության մասին։

Այսուհանդերձ այդ երկու լեզուների միջև եղած բազմաթիվ և կարևոր տարբերությունները բերում են այն եզրակացության, որ մեր առջև ոչ թե միևնույն լեզվի բարբառներն են, այլ իրար հետ սերտ ազդակցական կապեր ունեցող լեզուներ։

Կարծիք է հայտնված նաև ուրարտերենի՝ հնդեվրոպական նախալեզվի հետ ունեցած ազդակցության մասին¹⁹։

Կարևոր ու հետաքրքրական, բայց միանգամայն այլ տիպի խնդիր է ուրարտերենի և հայերենի միջև եղած ընդհանրությունների խնդիրը։ Այստեղ ազդակցություն չկա, լեզուները տարբեր լեզվական ընտանիքների են պատկանում։ Բայց հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում հայկական ցեղերի և ուրարտացիների կողք-կողքի երկարատև գոյակցությունը և ապա ուրարտացիների միաձուլումը կազմավորվող ժողովրդին, հանգեցրել է ուրարտերեն լեզվի բառապաշարի նշանակալից տարրերի ներթափանցմանը հայոց լեզվի մեջ, ինչպես նաև ընդհակառակը՝ հնդեվրոպական-հայկական լեզվի տարրերի ներթափանցմանը ուրարտերենի մեջ։



Ասորեստանի Ասորխադդե բազմաբ. Ասսուրական բարձրաքանդակ. V. ք. ա. VII դար

19 Տե՛ս ՄԿԽ, էջ 91—92.

20 Տե՛ս Գ. Բ. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963.

Այսպես, ժամանակակից հայերենում պահպանվել են բազմաթիվ պարզորոշ ուրարտական արմատներ, գոյականներ, բայեր, տեղանուններ: Օրինակ՝ ուր. էվրի—ստեր, հայ. ծով, ուր. պիլի—սջրանցք, հայ. պեղ-ել բայի արմատ, ուր. խուրի—հայ. հովիտ, ուր. ուլաու—հայ. ուլտ, ուր. արիլի-դուրի, հայ.—ավել-ացնել, ուր. կապի (տարողության չափ)—հայ. կապիճ, ուր. ուլ-ադի—սուղեորվեցիք—հայ. ուղի, ուր. շուրի—հայ. սուր (զենք), ուր. ծառի՝ սպտղատու այգիք—հայ. ծառ և այլն և այլն:

Բացառված չէ, որ սրանցից այս կամ այն օրինակը ոչ թե ուրարտերենի ազդեցության հետևանք լինի հայերենի վրա, այլ, ընդհակառակը, հայկական բառ՝ մուծված ուրարտերենի մեջ:

Անկասկած է տեղանունների ուրարտա-հայկական լայն ընդհանրությունը. էրեբունի-Երևան, Արիլանի-Արեղեանք, Արունի (Ավունի)-Հավունի-Հավնունիք, Տուարածինի խուրի-Տուարածահովիտ, Տուարածատափ, Տարիունի-Դարույնք, Դիաուլի-Տաշք, Զարախա-Ջավախք, Գիաունի-Գառնի, Ալզի-Ազձնիք, Բիայնիլի-Վան, Տոշպա-Տոթպ, Մելիտեա-Մալաթիա, Ալիա-Աղիովիտ, Մուփա-Մոփք և այլն և այլն:

* * *

Այսպիսով, հայ հասարակության անմիջական ակունքներից մեկի՝ Ուրարտուի մշակույթի համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ հինարևելյան տիպի ուշ շրջանի այդ պետությունն ունեցել է բարձր զարգացած ինքնատիպ մշակույթ, որը սկզբնապես կապված է եղել խուրրիական աշխարհի հետ, իսկ ավելի ուշ, մ. թ. ա. IX դարից սկսած, կրել է Ասորեստանի ուժեղ ազդեցությունը: Բայց, շնայած դրան, Ուրարտական պետությունը, համեմատաբար կարճատև գոյության ընթացքում, որ տեղի է շուրջ երկու և կես դար, մշտապես պահել է իր մշակույթի ուրույն գծերը և ազդել ոչ միայն իր կազմի մեջ մտած երկրների, այլև այն երկրների մշակույթի զարգացման վրա, որոնց հետ հարաբերություն է ունեցել: Ուրարտական մշակույթի ազդեցությունը, որոշ առումով, անարժեք է նրա քաղաքական սահմաններից շատ հեռու՝ Կովկասի ու Սկյութիայի, Փոքր Ասիայի ու Միջերկրածովյան շրջանի, ինչպես նաև Իրանի վրա: